ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ · ՆԻՒ ԵՈՐՔ, ՅՈՒՆԻՍ 1, 1895 · ԹԻՒ 10 ԱՄԲՈՂՋ ԹԻՒ 97

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAIK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D. 202 West, 23d St., New York, N. Y. Vol. V, 1895.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թուրքիոյ դէմ պատերազմ.— Մեր պայմանն.— Ներկայ Ստիպողական պարտքն. Դ. Գործ և Գործունէութիւն.— Մայիս 7ի մեծ ժողովն ի Լոնտոն.— 1895 թուականին «Հայքի» վճարուածք ամսանորդագրութիւնք.— Այլևայլք։

ԹՈՒՐՔԻՈՅ ԴԷՄ ՊԱՏԵՐԱԶՄ

Ճոսէֆ Փարքըր, անգլիացի հռչակաւոր երէցն, Հայոց Խնդրոյն վերայ քարոզելով ի Լոնտոն, Մայիս 26ին, յայտարարած է թէ բողոքոյ միթինկին ներկայ չէ գըտնուած ի՛նքն վասն զի համոզուած է թէ այլ ևս գործելու ժամ է, այսինքն Թուրքիոյ դէմ պատերազմելու։ Այսպիսի պատերազմ, ասեր է, քան զամենայն սուրբն՝ մարդասիրականն և արդարն կը լինի զոր երբէք գիտցած է աշխարհ։

Սէվիճ, անուանի երէց միաբաւան, Մայիս 19ին ի Պոսթոն յայտարարեր է ի քարոզելն թէ եթէ ինքն Ամերիկայի տիգդադար լինէր կը փութար ռմբակոծել զԿ·Պոլիս։

Վեր·Քէնրն Ուիլպրֆորս Լոնտոնի Մայիս եօթի միթինկին մէջ պնդեց թէ համբերելու ժամանակն անցած է։ Եթէ պատերազմն երբէք արդարանալի եղած է, պիտի լինէր յաւէտ երբ թնդանօթք գոռային այն հարստահարեալ ժողովրդին օգտին համար որ անտէր մնացած էր աշխարհի վերայ։

Արկայլի Դուքն պատասխանելով ումեմն որ խնդրած է խաղաղասիրական լեզու գործածել թուրք տէրութեան նկատմամբ, յայտարարած է թէ Անգլիական կառավարութիւնն ունի իւր պարտք կատարել յի՛չ և ի՛ցէ գին (at all costs)

Կլատսթոն ևս նոյն միտքն զգուշաւոր կերպով կը յայտնէ յասելն «բարոյական միջոցներով եթէ կարելի է, եթէ ոչ ուրիշ միջոցօք», այսինքն նաւային ցոյցով և պատերազմաւ։

Եթէ Անգլիոյ ներկայ կառավարութիւնն ստիպուի՝ կրնայ յանկարծ գրաւել զԿ·Պոլիս։ Բայց նոյն իսկ Անգլիոյ մէջ հանրային կարծիքն դեռ այնքան բորբոքած չէ որքան խնդրոյն ահաւորութիւնն կը պահանջէ. և ահա Լորտ Սալզպէրի կը ժպրհի, խօսելով ի Պրէթֆորտ, ասել թէ երեք տէրութիւնք անկարելի է որ բուռն այժ գործածեն Թուրքիոյ դէմ, և ուստի սպառնական խօսքերն կրնան պատճառ լինիլ բոլոր Հայոց արտաքսուելուն։ Անմարդասէր մարդուկին այս չնական յայտարարութիւնն ասել է Սուլթանին. Եւրոպայէն մի՛ վախնար, կրնաս, եթէ ուզես, բոլոր Հայերն արտաքսել երկրէդ։

Հասցէ
Editor of "HAIK" 202 West 23d St.,
New York.
U. S. America.

կամ Redaction de la Revue "HAIK" ևն

ԳԱՅՄԱՆԸ

Տարեկան բաժնեգինն է
ամեն երկրաց համար
երկու տալեր կամ տասն ֆրանք
Կանխիկ

ՄԵՐ ԳԱՅՄԱՆՆ

Սուլթանին ուղղակի իշխանութեան Հայաստանի մէջ անվրէպ վերջ տալ պէտք է այս անգամ. ասի լուրջ բարեկարգութեան անհրաժեշտ պայմանն է, որոյ վերայ Հայք և իրենց օտար բարեկամք ամենայն ուժով պնդելու են։ Այս պնդման պատճառքն յայտնի են։ Սուլթանն ինքնին կամակից և պատասխանատու է Սասնոյ կոտորածին և անոր նախաքայլն եղող պաշտօնական միջոցներուն։ Բաց այսի, մինչև ցարդ Սուլթանաց ուղղակի իշխանութեան ներքև ո և է քրիստոնեայ կամ ոչ-քրիստոնեայ նահանգ բարեկարգուած չէ և ոչ ալ պիտի կրնայ բարեկարգուիլ։ Թուրքք մոլեռանդ պատերազմող են, և բաւական ուժով հանդիսացան ցորչափ աշխարհակալութեան շրջանին մէջ էին. սակայն երբ այդմ յաջորդեց վարչութեան շրջանն, խղճալի կերպով տկար գտնուեցան։ Օսմանցիք վարչական ձիրք չունին, օրէնքներ կ'օրինակեն թղթի վերայ, բայց օրինօք կառավարելու արուեստին անընդունակ են։ Նոքա դատապարտուած են հպատակ ազգաց կարգն անցնելու քիչ ժամանակէն, և շատ հաւանական է որ ծծուին անհետ լինին այլ ազգաց մէջ։ Այս քաղաքական կարգի նկատողութենէն զատ՝ կայ նաև նոցա մահմետական մոլեռանդութիւնն որ գլխիվին անյօժար կ'անէ զնոսա ո և է բարիք կամենալու քրիստոնէից։ Ասի Օսմանցիք աւելորդ յորդութեամբ ապացուցած են աշխարհի։ Ուրեմն, նոցա անընդունակութիւնն ու դըժկամակութիւնն միանդամայն քաջ ծանօթ լինելով, ուրիշ բան չի մնար անել բայց եթէ նոցա ուղղակի իշխանութենէն փրկել զՀայաստան, և զայն դնել եւրոպական թեւարկութեան տակ։

Ուրախութեամբ տեղեկացանք այս անգամ Տէյլի Նիւզէն թէ Անգլիահայկական բարեջան ընկերակցութեան Խորհուրդն իւր խորհրդարանական մասնախմբին հետեւեալ որոշումն վաւերացուցեր է.—

«Քրիստոնեայ բնակչաց գոհարար չպիտի լինի ո և է վարչական բարեկարգութեան ծրագիր որ չընծայեր շարունակելի եւրոպական հսկողութիւն ի ձեռն փոխարքայի կամ բարձր պատուիրակի մի՝ ի Տէրութենանց կարգեալ, որ չէ եղած, չէ և չպիտի լինի օսմանեան հպատակ։»

Զայս որոշում Տ. Շուան առաջարկեց, Փրոֆ. Պիլթ երկրորդեց և միաձայնութեամբ ընդունելով յղեցին առ նախարարն Արտաքին Գործոց, Լորտ Քիմպէրլէյ։

Թայմզի և Տէյլի Նիւզ ի մէջ Քէնըն Մ'Քոլ նամակ մի կը հրատարակէ յորում կը գտնուի հետեւեալ արդար յայտարարութիւն.— «Մեք կը հաւատամք թէ օգտակար լինելու ո և է յոյս տուող փոքրագոյն դարմանն է ոչ-մրսուելման կառավարչի մի կարգումն որ անյետոսկոչելի լինի Սուլթանէն, և ոչ նորա իշխանութեան ենթակայ, և ունենայ (զինուորական) զօրութիւն կարգ պահպանելու համար։ Տեղական Խորհրդոց մէջ քրիստոնեաներ ընդունելու և խառն ցանձնախումբ մի վերատեսուչ կարգելու թելադրութիւնն կատարեալ խաբէութիւն կը լինի։ Քրիստոնեայք արդէն ընդունուած են տեղական խորհրդոց մէջ, և իրենց ներկայութիւնն, ըստ միաձայն վկայութեան Բրիտանական հիւպատոսաց, լոկ աղետաբեր է։ Թուրք պաշտօնէից արբանեկող անձեր կ'ընտրուին, որք կը ստիպուին քրիստոնէից ամենաֆնատակար վաւերագրեր ստորագրել։ Գրելով կատարեալ հմտութեամբ վերջին յիսուն ամաց Պլիու Պուքերու, կը յայտարարեմ թէ ամենայն առ երեւոյթ բարեկարգութիւնք ի նպատ քրիստոնէից որք թուրք պաշտօնէից վարչութեան ներքև թողուած են, վատթարացուցած են քրիստոնէից բաղդն։»

Տէյլի Նիւզ խմբագրօրէն ոյժ կուտայ այս յայտարարութեան և կը պօռայ թէ «անուղղայ Թուրքն երբէ՛ք Հայաստանի մէջ իշխելու չէ նորէն։»

Երեք դեսպանաց կողմէն Սուլթանին

յղուած ծրագիրն, որքան իւր բովանդակութիւն ծանօթ է, յոյժ անբաւական դարման է մանաւանդ Հայաստանի համար, որ ծովեզերքէն հեռի գոլով անմատչելի է արագահաս օգնութեան, և աւելի քան Սիւրիա և Պուլկարիա և Յունաստան կարօտ է ապահով և հաստատուն դրութեան մի։

Գալով վեհապետութեան խնդրոյն, Հայքս չեմք առարկեր Սուլթանին վեհապետութեանն։ Օսմանեան դաւազանն կ'ատեմք բայց ոչ գահն։ Սուլթանայ իշխանութիւնն զգուելի է և յաւիտեանս յաւիտենից մերժելի, բայց անուանական վեհապետութիւնն ընդունելի է մեզ։ Թող որքան որ կարենայ, փատիշահն մնայ ի Կ. Պոլիս իբրեւ հիւանդ պահապան։ Անգլիա, Ռուսիա, Ֆռանսա, Պապն և այլն այդպէս կ'ուզեն առ այժմ։ Մեք ալ այդպէս կ'ուզեմք։ Մեզ ալ նպաստաւոր է որ հիւանդ մի մնայ պահապան Պոսֆորի եզերաց, և այդ հիւանդին իշխանութեան տակ դտնուիմք անուանապէս մինչև որ խտանամք, զօրանամք և պատրաստ գըտնուիմք մեր բաժինն պահանջելու այն օր երբ հզօրք որոշեն բաշխել հիւանդին ժառանգութիւնն։

Ուրեմն Սուլթանն գահընկէց անելու կամ օսմանեան իշխանութիւնն քայքայելու հետ մեք այժմ գործ չունիմք։ Սուլթանի գահուն խորտակման համար յայնժամ պիտի աշխատիմք Հայքս երբ Հայաստանի համար մեր արդար պահանջ մերժուի։

ՆԵՐԿԱՅ ՍՏԻՊՈՂԱԿԱՆ ՊԱՐՏՔՆ

Դ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԵՏԵՒՈՒԹԻՒՆՔ ԳՈՐԾ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Մեր վերջին յօդուած պարզեց մի վարդապետութիւն զորոյ սրամադրութիւն Հայ ազգն յընթացս իւր պատմութեան առաւել բռնաբարած է քան գործադրած և այսու ծանրագին տուժած է իւր անկմամբ և քայքայմամբ։ Սակայն որպէս աննկատութիւն այդ սկզբանց յանգած է յանկումն Հայոց, նոյնպէս միայն ասէն գործադրութիւն նորին կարէ յաջողել վերականգնումն Հայաստանի։ Երբ ժողովուրդն զգայ և ճանաչէ զիւր պատասխանատուութիւն, յայնժամ փոխանակ թուլութեամբ սպասելոյ պիտի փութայ անել ամեն ինչ որ կ'օգնէ զերծանել զինքն ներկայ ամօթալի վիճակէն և ապահովել զիւր գոյութիւն և բարօրութիւն։

Արդ, ինչ՞ են գործնական հետեւութիւնք այդ վարդապետութեան։ Ի՞նչ է մեր գործ։ Ի՞նչ է չափ և հանգամանք մեր գործունէութեան։ Եւ ինչ՞ եղանակք և գործիք հարկաւոր են մեզ։ Սոքա կարեւոր հարցումք են և կ'առաջադրեմք ասա նկատել միայն գառաջին երկուս։

Զմեր գործունէութեան անմիջական նըպատակ հարկ է որոշակի և քաջ ըմբռնել։ Ըստ ինձ այն է լցումն մեր ներկայ կարօտութեանց և բարձումն այն վչտանաց որք ուղղակի կը բղխին Հայաստանի քաղաքական վիճակէն։ Մեր վչտանք երկու կարգի են, նախ՝ վչտանք որ կը հետեւին Թրքաց զեղծ և ճնշիչ վարչութենէն և որ հասարակաց են բոլոր հպատակաց, և երկրորդ՝ վչտանք որ կը ծագին սա պարագայէս թէ մեք կը պատկանիմք հայ ազգին և Քրիստոնեայ կրօնից։ Ուստի մեր նպատակն է ոչ միայն հաստատել մի բարւոք վարչութիւն ի Հայաստան, այլ և մի հայ և քրիստոնեայ վարչութիւն որ ասպարէզ նուիրէ հայ ձեռնարկից և ապահովէ անարգել զարգացումն հայ ցեղին յուսումն և յարուեստս քաղաքակրթութեան։ այն կը նշանակէ անպայման բնաջնջումն Փաշայից և Պէյից իշխանութեան որ արմատապէս և գլխովին անհամերաշխ է տարրական սկզբանց քաղաքակրթութեան։

Բացայայտ է թէ զայս գործ կատարելու համար պարտ է մեզ գործածել ամեն միջոց, մեծ կամ փոքր, գաղտնի կամ յայտնի, որ ուղղակի կամ անուղղակի կ'առաջնորդէ վախճանին։ Մեր գործունէութեան չափն և հանգամանք հարկաւ պարտին լինիլ հաւասար և համաձայն այն զանազան դժուարութեանց որք կ'արգելուն զյաջողութիւն գործոյն։ Պարտ է մեզնախ տեղեակ լինել այս դժուարութեանց որպէս զի կարենամք առնուլ պատշաճ միջոցն նոցա յաղթելու։

Առաջին դժուարութիւն որ մեզ կը

ներկայանայ է հայ ցեղին սակաւութիւնն և ազիտութիւն ի Հայաստան։։ Ցեղից համեմատական թիւն ի Հայաստան միշտ կարեւոր խնդիր մի նկատուած է և թերեւս անտեղի չէ ասել թէ եթէ այդ խնդիր չգոյանար Եւրոպա արդէն հաստատած կը լինէր մի հայ տէրութիւն։ Պարտ է մեզ ճանաչել զիրն թէ Հայք ի Հայաստան ունին առաւելութիւն (plurality) ապց բայց ոչ մեծամասնութիւն (majority)։ Անշուշտ ըստ մեզ Եւրոպա անիրաւ է գայս իրրեւ առարկութիւն յարուցանել և մինչ իսկ նկատել։ Ո՞չ ապաքէն Մահմատ, որ Հունգարիոյ բնակչաց մէկ քառորդն կը կազմեն, կ'իշխեն անդ։ Ո՞չ ապաքէն 6 միլիոն Թուրք կ'իշխեն 30 միլիոն ժողովրդոց յորոց 12 միլիոն քրիստոնեայք են։ Ո՞չ ապաքէն Թուրք ի Հայաստան, որ մասամբ չեն այլ ինչ բայց եթէ ուրացող Հայազունք, փոքրամասնութիւն կը կազմեն, և չունին և ոչ առաւելութիւն թուական։ Ուրիշ նկատմամբք մանաւանդ դժուար չէ ցուցնել զանտեղութիւն այս «առարկութեան»։ Բայց ասա մեք կ'ուզեմք քննել զխնդիրն ուրիշ տեսակեսով։ Եթէ հայ ժողովուրդն ինքն պիտի աշխատի և իրացնէ զիւր ազատութիւն, յայնժամ իւր թուական և կրթական վիճակն մեծ կարեւորութիւն ունի։ Ըստ մեզ անհրաժեշտ հարկ մ՝է որ Հայաստանի Հայոց թիւն բազմանայ և իմացական և անտեսական մակարդակն բարձրանայ։ Թրքաց վայրագ բռնապետութիւնքն ցարդ կը սարսիէր հակառակ ուղղութիւնն։ Մեր Սասնոյ ատն հազարք չմեռան իբրեւ։ Զիարդ և իցէ արդիւնքն Եւրոպական միջամտութեան, Թրքին զօրութիւն ի Հայաստան ուռանած է Սասնոյ հարթումն և ոչ ևս կրնայ կիրառել իւր աւերիչ պաշտօնն ի Հայաստան։ Ուրեմն հարկ է արդելուլ Հայոց արտագաղթումն և քաջալերել դաղթականաց վերադարձն ի Հայաստան։ Պարտ է անդ դպրոց և մամուլ հաստատել։ Սակայն ամենէն կարեւոր պէտքն է կրթուած և ձեռնարկու Հայոց հաստատութիւնն ի Հայաստան։ Հայք որ դաղթած են ի Ռուսիա, յԵւրոպա և յԱմերիկա, տեղեկացած են արդի դաղափարաց և արդի արուեստից, և եթէ դառնան ի հայրենիս պիտի դտնեն անոահման ասպարէզ իւրեանց գործունէութեան և ձեռնարկութեանց։ Մեր պատանիք փոխանակ հետեւելու տեսական ուսմանց և ասուածաբանութեան յետայսու թող ուսանին արուեստաբանութիւն որպէս զի դառնալով ի հայրենիս բանան աշխատարան, չինեն կամուրջս և ուղիս և մշակեն զհանքս։ Այս վերադարձքն և չինումն Հայաստանի պիտի օգնէ հայ փաստին։ Բայց թող ամեն ոք լաւ սովրի թէ Հայուն համար չկայ լաւագոյն ասպարէզ անձնական շահուց համար քան զանշահագործեալ Հայաստան։

Երկրորդ դժուարութիւնն որ մեզ կը յանդիմանի է Թրքաց բիրտ զօրութիւն։ Թուրքիոյ թագաւորք և թագուհիք, այսինքն պալատական կանայք և մօլլայից խումբն, որ կ'իշխեն անուանական գահակալին Ն։Վ։Սուլթան Համիտի, վերջին ծայր ագէտ և մոլեռանդ են և անհնար է նոցա բարի աչօք դիտել քրիստոնեայ Հայոց զարդացումն։ Նոքա վճռած են բիրտ զօրութեամբ կասեցնել զայդ։ Արդէն անձնական ազատութեան ստուերն անգամ չէ մնացած։ Ուր որ այդ ազատութիւն կը պակասի, բնական հարկ մ՝է քաղաքական յեղափոխութիւնն։ Պարտ է մեզ տապալել ի հիմանց զայդ բարբարոսական իշխանութիւնն ի Հայաստան զօրական ապստամբութեամբ։ Բայց հաւանաբար դիւրագոյն և անչուշտ լաւագոյն է տապալել զամբողջ անիծեալ դրութիւն բուն ի կեդրոնն։ Ուստի մեզ պէտք է յեղափոխական գործունէութիւն, այսինքն պատրաստութիւն ժողովրդեան՝ յարմար և նպաստաւոր առթիւ թօթափելու Թրքաց ատելի լուծն։ Այս գործունէութիւն գաղտնի պարտի լինիլ և չէ տեղւոյս աւելի խօսել։

Երրորդ դժուարութիւնն որ մարթ է երեւիլ է Եւրոպիոյ կացութեան անպատաստ վիճակն։ Զայս կրնամք գնահատել եթէ դիտեմք թէ Եւրոպիոյ հաւանութեան և օգնութեան կարօտ եմք։ Մինչ իսկ եթէ կարէինք զօրական յեղափոխութեամբ արտաքսել զԹուրքս ի Հայոց, յայտնի է թէ առանց հաւանութեան մեծ ազգաց անհնար է քաղել զպտուղ մեր յաղթութեան։ Պարտ է մեզ շահիլ գհաւանութիւն և զնպաստ միւս ազգաց։ Եւ զայդ ակնկալելու բիւր պատճառ ունիմք։ Արդէն արդի յուզմամբք շահած ենք բաւական ընդհանուր համակրութիւն։ Հարկ է որ այդ աւելի որոշ և չշոչափելի պայմանաց յանգի։ Բացայայտ է թէ այս գործունէութեան ուղղութիւն տալու համար պէտք կայ պատշաճ գործեաց։ Զայդ ինդրոյ կը մնայ մեզ խօսիլ յաջորդիւ։

ՏԻԳՐԱՆ ՍԻՒՆԻ

ՄԱՅԻՍ ԵՕԹԻ ՄԵԾ ԺՈՂՈՎՆ Ի ԼՈՆՏՈՆ

Ի սկզբան ժողովոյն կարդացուեցաւ նամակն զոր Մեծ Ծերունին առ նախագահն ուղղած էր։ Այդ նամակի մէջ Կլատսթոն կ'ասէ.

«Կը մտածեմ թէ փքոցուռոյց թուրք կառավարութիւնն որոշած է, թուի թէ, ամեն բան անել իւր իսկ կործանումն յառաջ բերելու համար։ ... Եւրոպիոյ պարտաւորութիւնն է չվստահիլ բնաւ լոկ բառից, այլ խափանել ազդու միջոցօք այդպիսի եղեռանց կրկնումն։ ... Զեմ ուզեր երկար խօսելով տաղտուկ տալ ձեզ, այլ միայն իմ զօրաւոր համակրանքս կ'ուզեմ արտայայտել և իմ յոյս թէ բարոյական միջոցներով, եթէ կարելի է, եթէ ոչ՝ ուրիշ միջոցօք, լիուլի երաշխիք պիտի առնուի որպէս զի Սուլթանն և իւր խրատուք ապագային մէջ չդիմեն այլ ևս այնպիսի ամօթալի գործերու։» (1)

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Արկայլի Դուքսն թէպէտ հիւանդութենէ նոր և հազիւ ապաքինած, նախագահեց և Խրիմի պատերազմին ծագման ու անգլիական քաղաքականութեան հանգամանքն պարզեց։ Ինքն և Կլատսթոն են միակ երկու դերակեացքն (suvirvors) խրիմական դահլճին անդամներէն։ Այդ ահագին պատերազմի նպատակն եղած է Եւրոպական թեւարկութիւն հաստատել փոխան լոկ ռուսականի ի վերայ քրիստոնէից Թուրքիոյ։ Պուլկարիոյ կոտորածէն պատճառեալ վերջին ռուսընդթուրք պատերազմէն յետոյ նոյն եղաւ Անգլիոյ վարմունքն, որ ասաց Ռուսին— ո՛չ, դու պիտի չլինիս միակ պաշտպանն Թուրքիոյ քրիստոնէից։ Թէպէտ Պէոլինի դաշնագիրն չլինէր, այս մեր միջամտութիւնն իսկ բաւական պիտի լինէր զմեզ պատասխանատու կացուցանելու քրիստոնէից վիճակին։ Եւ մեր պատասխանատուութիւնն շատ մեծ է, վասն զի թրքական խոստմանց իրականացումն բռնադատած չլինելով, մեք իրաց վիճակն աւելի դառնացուցած եղանք։ Նախ այնու զի քրիստոնեայք մեր յանձնառութեան վերայ յոյս դնելով այնպէս խօսիլ և վարուիլ սկսան որ Թուրքն գրգռեցաւ, և երկրորդ այնու զի թրքաց ներշնչած եղանք մահաբոյր ատելութիւն դէպ ի քրիստոնեայս, առ որս օսմանցւոյն զայրագին ընթացքն կը թարգմանուի սապէս—Դուք օտար տէրութեանց կը դիմէք, ա՜, պիտի ցուցնեմ ձեզ թէ նոքա չեն կարող միջամտել»։

Լիվրփուլի Լորտ քաղաքապետն ասաց թէ ինքն կուգար արտայայտելու ոչ միայն զիւր զգացումն, այլ և գրազում Լիվրփուլցւոց զորս ինքն կը ներկայացնէր։ այդ անիրաւ և յոռեգոյն քան զբարբարոս տէրութիւնն նորէն սոսկացուցեր է զաշխարհ ապստամբեցուցիչ անգթութեան այնպիսի արարիւք որոց համար դիւաց բանակ մ'անգամ կրնայ չիկնիլ։ Տ. Ֆ. Ս. Սթիվընսըն, Անգլեհայկական ընկերակցութեան յարգելի նախագահն, ասաց թէ Սասնոյ խժդժութեանց իրականութիւնն հաստատուած է ոչ միայն Տէյլի Թէլէկրաֆի, Տէյլի Նիւզի և Թայմզի թղթակցութեամբք այլ և անգլիական հիւպատոսաց հեռագրովքն առ կառավարութիւն։ Գաղտնիք մի մասնած չէր լինէր եթէ ասէր վկայութեամբ ուրումն որ այդ հեռագրերն աչօքն տեսած էր, թէ ապացոյցքն այնքան վաւերական էին որքան պիտի նկատուէին եթէ Զէյրինկ Քրոսի (Լոնտոնի մէկ կեդրոնական թաղին) մէջ տեղի ունեցած լինէին բարբարոսութիւնքն։

Տիկին Էյլտի Սամբրսէթ սրտայոյզ ձայն բարձրացոյց թէ պէտք է դադրիլ խաղաղութի՛ւն, խաղաղութի՛ւն աղաղակելէ, երբ չկար խաղաղութիւն։

Քէնրն Մ'Քոլ հետեւեալ առաջարկութիւնն ներկայեց. «Այս ժողովս, յանուն նախատեալ մարդկութեան, կոչում կ'անէ Նորին Վեհափառութեան կառավարութեանն, համաձայն դաշնագրական պատասխանատուութեանց, անմիջական միջոցներ ձեռք առնուլ վերջ տալու համար բարբարոս չարավարութեան այն դրութեանն որ 17 տարիէ ի վեր կը տիրէ ի Հայաստան, և պնդելու որոշ, բաւական և տեւական բարեկարգութեանց իրագործման վերայ ընդ ազդու և մշտական հսկողութեամբ և հովանեաւ Եւրոպիոյ։»

Որոշումն քուէարկուեցաւ, յետ որոյ ուրիշներ ևս ատենախօսեցին, և Փրոֆ. Ակար Պիթ յայտարարեց թէ այս ժողովին ծախքն Ուէսթմինիսթրի Դուքսն առատաձեռնութեամբ հոգացած էր։

(1) Հայերէն թերթ մի սխալ թարգմանած է այս կտոր, իբր թէ Սուլթանն ձեռք պիտի առնու բարոյական և այլ միջոցներն։

1895 ԹՈՒԱԿԱՆԻՆ «ՀԱՅԿԻ» ՎՃԱՐՈՒԱԾ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՔ Ի ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ

ցմայիս

	Ամբողջ տարեկան	Կէս տարեկան
Լիւն	36	3
Նիւ Եորք	30	7
Ուսթըր	12	10
Փրովիտէնս	12	
Թրոյ	9	1
Պոսթոն	7	1
Ֆրէզնոյ	7	
Լորէնս	6	1
Ֆիլատէլֆիա	5	1
Նիւ Պրիթէյն	5	1
Լօէլ	4	2
Շիքակոյ	4	
Ուօքէկըն	4	
Զէլսի | 3 | 1
Պրուքլին | 3 | |
Ունսօքէթ | 2 | 1
Փէթէրսըն | 1 | |
Այլեայլ քաղաքներ | 48 | 7
Գումար | 198 | 36

Վերի ցանկին վերայ խորհրդածել կը թողումք ընթերցողաց։ ՀԱՅԿԻՆ ամիսն Զանգամհրատարակուելու համար հարկ էր ունենալ առ նուազն 400 բաժանորդ ի Միացեալ Նահանգս, որպէս ի սկզբան ծանուցինք, և կը յուսայինք թէ պիտի գտնուէին։ Եռանդն աշխատողաց չուտով չիջաւ։ Բեռն կը մնայ նորէն խմբագրին խոնջ ուսերուն և իւր մի քանի աջակցաց վերայ։ Արդեօք մեր Ամերիկայի գաղթականք պատճառ չո՞ւնին իրենք զիրենք յանդիմանելու այդ թուլութեան համար։

Վեցամսեայ բաժանորդ գրուած ազգայինք թող հաճին երկրորդ վեցամսեայն փութով յղել որպէս զի թերթս անընդհատ ընդունին։

Ո՛րոնք որ ներկայ Յունիսին սկիզբէն բաժանորդ գրուին «Հայքի», ներկայ թիւէն սկսեալ կ՚ընդունին զայն, այսինքն 7 ամիս շարունակ։

Բաժանորդ գրուիլ կը նշանակէ բաժնեգին յղել, ոչ թէ լոկ անունն։

ՀԱՅԿԻ ներկայ թիւն 8 երեսէ կը բաղկանայ, փոխանակ 16ի։ Այս բացառիկ պեղչում պատճառեցաւ յակամայից։

ՅԱՅԼ ԵՒ ՅԱՅԼՔ

Պէյրութէն կը գրեն մեզ։

Այս տեղ Սասնոյ սրածելոյ ի նըպաստ հանգանակութիւն անելու աշխատողներն աքսորուեցան և նոցա սեպհականութիւնք այժմ յարքունիս կը գրաւին։

Հայ մեծատուն մի Հայաստանէն հեռագրած է առ Անկլիահայկական ընկերակցութիւնն ի Լոնտոն ապսպրելով որ նշանաւոր նկարչի մի նկարել տան Կլատսթոնի և Արկայլի Դքսին պատկերներն էջմիածնի գըրատան մէջ կախելու համար։

Օր. Էլիս Սթօն Պլէքուէլ Նալբանդեանի «Ազատն Աստուած» չափեալ անգլիերէնի թարգմաներ է սխրալի կերպիւ։ Թարգմանիչն ինքն բանաստեղծ գոլով, բնագրին բովանդակ այժն պահել կրցած է։ Օրիորդն աւելի քան 30 հայերէն բանաստեղծութիւններ թարգմանած է ցարդ անգլիերէնի զորս ի մօտակայս ի լոյս պիտի ընծայէ ի մի հատորիկ։

Հայ նշանաւոր հրապարակախօս Տ. Մ. Մանկասարեան սկսած է ազատ թարգմանութեամբ անգլիերէնի յեղուլ Ռաֆֆիի «Խենթն» ու «Կայծերն»։ Թարգմանիչն անգլիերէնի ներկուռ և քաջ գրող լինելով՝ վստահ եմք թէ իւր ձեռնարկ ամենակերպ յաջողութեամբք պիտի պսակուի։

Ապրիլ 28ին Նիւ Եորքի մէջ կազմուած յանձնախումբն կը շարունակէ միութեան ծրագիրն մշակել, զոր մօտ օրերը պիտի կրնայ հրապարակ հանել։

Իսկ Պարոն Քիրէչճեանի նախաձեռնութեամբ սկսուած փորձն, որպէս ի ըսկզբանէ յայտ էր փորձառուաց, սկսած է իւր դառն պտուղներն տալ։ Մայիս 25ին աղմկալիր և դառնաշունչ պայքարի ասպարէզ եղած է այդ ժողովն զոր ոմանք կը յանդգնին «Ազգային» խոշոր անուամբ մկրտել։

Մայիս 18ին Հայր Տէրունեան կրօնական պաշտօն կատարեց ի Նիւ Եորք ի յիշատակ տարեդարձի մահուանն Ռուսիոյ ողբացեալ Զարին։

Փրովիտէնսէն կը գրեն մեզ թէ բարեկիրթ և ծնելասէր հայ կին մի, Տիկին Ա. Մ. Շիշմանեան, իւր մահկանացուն կընքեր է յԱթլոր։

Մայիս 19ի կիրակի երեկոյեան պաշտամունքն ի Ս. Պետրոս եկեղեցւոջ (եպիսկոպոսական) նուիրուեցաւ Հայոց Խրնդրոյն։ Գնդապետ Պէյքըն, Հայոց ծանօթ բարեկամն, առաջին ատենախօսն էր, որ Թուրքիոյ մէջ ուղեւորած լինելով ծանօթ է մահմետականաց բարուց և վարուց և կոտորածոց պատմութեան, և հրացայտ ոճով հարուածեց Թուրք բռնապետութեան ընթացքն Հայ քրիստոնէից նկատմամբ։ Երկրորդ ատենախօսն էր ՀԱՅՐԻ խմբագիրն որ ասաց թէ ճիշդ ութ հարիւր տարի էր անցած այն օրէն ի վեր երբ Պետրոս ճգնաւորն սկսաւ խաչակրութիւն քարոզել ընդդէմ մահմետականաց, և քրիստոնեայ Եւրոպա, այդ քարոզութենէ գրգռուած, իբր երկու դար ընդհարեցաւ միւսիւլման աշխարհի հետ և յոգնած ետ քաշուեցաւ վերջապէս։ Յայնմ հետէ գլխովին փոխուած է քրիստոնեայ և մահմետական աշխարհաց կացութիւնն իրարու նկատմամբ. այժմ քրիստոնեայ Եւրոպայն բովանդակ մահմետական աշխարհին կա՛մ ուղակի կը տիրէ կա՛մ գերիշխան է։ Եւ խնդիրն, որոյ վերայ կ'ուզէր տեղեկութիւն տալ իւր ունկնդրաց, էր ճիշդ այն թէ Քրիստոնեայ Տէրութիւնք ինչպէս պարտին վարուիլ Թուրքիոյ հետ, որ մահմետական տէրութիւն մ'է իւր հին զօրութենէ ինկած, բայց իւր իշխանութեան տակ ունի դեռ քրիստոնեայ երկիրներ, մանաւորապէս զՀայաստան։ Ապա անցաւ ցուցնելու թէ ինչ յառաջդիմութիւն արած էին Թրքերն զքրիստոնեայս ջարդելու արհեստին մէջ, որպէս կ'երեւէր Սասնոյ քստմնելի անցից պատմութենէն։ Գուրանէն վկայութիւններ կարդալով հաստատեց թէ Մահմետականութիւնն որպիսի անթոյլատու կրօն մ'է, թէ ինչ յատակութեամբ կեռավուրներն ջարդելու հրաման տրուած է միւսիւլմանաց, և թէ, հետեւապէս ինչքան զուր է սպասել որ մահմետական Թուրքն մահմետական մնալով հանդերձ՝ բաղձայ որ իւր քրիստոնեայ հպատակք բարօրիկ և հանգիստ լինին։ Եւրոպիոյ պարտքն է ուրեմն վճռել որ Թուրք փաշա, Թուրք զորք և Թուրք օրէնք այլ ևս գործ չունենան Հայաստանի մէջ զոր աւերել ու պղծել իրենց սրբազան պարտքն պիտի համարին դոքա ցորչափ պատեհութիւն ունենան։

Որոշումներ քուէարկուելով յղուեցան Ուօշինկթոն և Լանտոն։



ԴԻՒՐՈՒԹԻՒՆ ՓՈԽԱԴՐՈՒԹԵՆՆ

ՄԱՐԴՈՑ ԵՒ ՍՏԱԿԻ

Նաւերու տոմսակ կուտանք դէպ ի Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ուէ կողմ երթալ ուզողներուն։ Մասնաւոր գծեր ունիմք ուղղակի Թուրքիա կամ Ռուսիա տանելու։ Մեծ դիւրութիւն մը կը լինի ճամբորդներուն երբ հոս գիտեն թէ ինչ գծով պիտի ուղեւորին, և տոմսակնին կը գնեն մէկէն, որով թէ՛ ածան գնով պիտի առնեն և թէ՛ օտար երկիրներու մէջ տոմսակ գնելու համար միջնորդներու պէտք չունենան և չխաբուին։ Նոյնպէս Եւրոպայէ դէպի հոս եկողներուն ևս մեծ դիւրութիւն է տոմսակը հոս գնել և խրկել, որ տակը չկորսուի և չխաբուին ինչպէս չատերուն եղած է։ Անենէն լաւ գիծը գիտցուած է ՖՐԷՆՉ ԼԱՅՆը որուն վրայ բոլոր ճամբորդներէն գոհունակութիւն լսած ենք։ Նաւերը մեծ և գեղեցիկ են և արագ կ'երթան. լաւ կերակուր և գինի կուտան, և ածան գնով։

Նաև մեր տանց տակի փոխադրութիւնը տարիներէ հետէ գոհացուցած է բոլոր յաճախորդներն։ Փորձառուներէն հասկցիր տակդ ձեռքէդ հանելէդ առաջ որպէս զի չխաբուիս, երբ ըսեն թէ ուրիշներէն ածան կուտանք։ Ապահովութիւնը բոլոր շահերուն մեծագոյնն է և չատ տարիներու փորձառութիւնը մեծ ապահովութիւն մ'է։ Ատի տակ և տոմսակ Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ուէ կողմ խրկել ուզողներ կամ տեղեկութիւն ուզողներ կրնան դիմել հետեւեալ հասցէին։

Նամակներու պատասխանները չուտով կը գրուին։

D. M. SHOOSHAN
41 Exchange St. Worcester, Mass.

M. S. T. NAHIGIAN,

IMPORTER AND EXPORTER.

Also

Banker and Steamship Agent.

P. O. BOX, 478-

Worcester, Mass., U. S. A. June 1; 1895.

Սիրելի Հայրենակիցք,

Մեր գործին 14րդ տարին յաջողութեամբ թեւակոխած եմք։ Մեր անցեալ տարիներու գործունէութիւնն և հանրածանօթ հաւատարմութիւնն, որով միայն յարգելի յաճախորդաց գոհունակութեանն և քաջալերութեանն իրաւամբ արժանացած եմք։ Ապագայում ևս առաւել դիւրութիւններ ի ձեռին, շարունակելի լինիլն խոստանալու պէտք չկայ։

Ուստի շնորհակալութիւնս յայտնելով մեր յարգելի յաճախորդաց վաղն անցելոյն, կը յուսամք և կ'ակնկալեմք որ մեր հայրենակիցներ առ հասարակ, մեր անցեալն գրաւական առած պիտի բարեհաճին մեր հետ գործ ընելվստահ լինելով թէ ամենադիւրին և ամենապահով և ամենակարճ միջոցներ ունիմք զիրենք գոհացուցանելու, և յաճախորդաց կարեւոր դիւրութիւններ ընծայելու համար, հեռագրով կամ փոխ-գրով դրամ ուղղակի փոխադրելու կարգադրութիւն ըրած եմք պատուաւոր վաճառականներու հետ հետեւեալ քաղաքաց մէջ.

Կ. ՊՈԼԻՍ ԽԱՐԲԵՐԴ

ԶՄԻՒՌՆԻՍ, ՊԷՐՈՒԹ, ԻՍԿԷՆՏԷՐՈՒՆ, ՀԱԼԷՊ, ԱՑՆԹԱՊ, ՄԷՐՏԻՆ, ՏԻԱՐՊԷՔԻՐ, ՄԱԼԱԹԻԱ, ԱՐԱԲԿԵՐ, ԱԿՆ, ԵՐԶՆԿԱՑ, ԿԻՒՐԻՆ, ԿԱՐԻՆ, ՎԱՆ, ԲԱՂԷՇ, ՄՈՒՍՈՒԼ, ԷՍԿԻ ՇԷՀԻՐ, ԿԵՍԱՐԻԱ, ԿԻՐԱՍՈՆ, ՍԱՄՍՈՆ, ՍԵԲԱՍՏԻԱ, ԵՈԶԿԱԹ, ԷՆԿԻՒՐԻՒ, ՊԱՂՏԱՏ։

Վերոյիշեալ քաղաքներէ զատ Թուրքիոյ մէջ ուրիշ տեղեր ալ ուղղակի դրամ փոխադրելու մասին ևս թղթակցութեան մէջ եմք։ Մարսիլիոյ մէջ հայ պատուաւոր վաճառական մի կը նայի մեր գործոց որպէս գիտէք։ Նաև Եւրոպիոյ գլխաւոր քաղաքներ ևս դրամի փոխադրութեան դիւրութիւն ունիմք ապահով պանգայի մի հետ մասնաւոր կարգադրութեամբ։

Նաւատոմսի գործակալութիւնն կը շարունակեմք, և ամեն նաւային ընկերութեանց նաւերով աշխարհի ո և է կողմն դացողի համար գոհացուցիչ գներով տոմսակ կրնամք վաճառել։

Նամակաց անմիջապէս պատասխանել մեր սովորութիւնն է։

Ձերդ հաւատարմութեամբ,

Մ. Ս. Թ. ՆԱՀԻԳԵԱՆ